«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ուսուցիչների կողմից սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան:*

Հետազոտող ուսուցիչ՝ *Էմմա Համբարձումյան*

ք.Արմավիր Անդրանիկ Օզանյանի անվան N5 հիմնական դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ *Արմինե Անտոնյան*

ԱՐՄԱՎԻՐ- 2022

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3

ԳՐԱԿԱՆԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ……6

ԳԼՈՒԽ 1

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՐԳԸ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉԸ……..8

ԳԼՈՒԽ 2

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԾՐԱԳՐԵՐ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՅԴ ԾՐԱԳՐԵՐՈՎ……..14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……17

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցումն ու դաստիարակությունը անխզելի միասնություն են կազմում և իմաստալից է խոսել միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին: Կրթական պրակտիկայում դաստիարակության և ուսուցման ոլորտները նկատելի չափով տարանջատվում են, բայց և միաևնույն ժամանակ գործում են միասնաբար:

Թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից: Կարճ ասած, դաստիարակության մեջ որոշիչը միջավայրն է. եթե հասարակությունն ինքը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, դրանք չի կարող մատուցել և ստիպել նրանցով ապրել իր սերունդներին: Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար: Ուրեմն դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, **որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:** Դաստիարակության ընդհանուր ռազմավարության և օպտիմալ տեխնոլոգիաների բացակայության պայմաններում ուսուցչի դերն առավել կարևորություն է ստանում: Ուսուցչի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնային ու ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ներուժ ունեն:

Հայ երեխայի մեջ անհատապաշտական ոգին ուժեղ է արտահայտված: Այս առումով հանրակրթության ոլորտում մենք առավելապես սոցիալական

անհատների և սոցիալական բնավորության ձևավորման խնդիր ունենք: Ուսուցիչը չպետք է անտեսի այս պարագան և ամեն կերպ սատարի մատաղ սերնդի մեջ հայրենասիրության ոգու արթնացմանն ու ծավալմանը: Մեր հայրենիքը, մեր լեզուն ու հավատը, մեր մշակութային գանձերը, մեր գիտնականներն ու արվեստագետները, մեր ռազմական գործիչներն ու մեր հերոսները պետք է ամենաբազմազան ձևերով և բազմակողմնանիորեն ներկայանան տարբեր ուսումնական նյութերում, դասերի կազմակերպման մեջ, պատի թերթերում և այլուր:

Կրթության արդի զարգացումներում առանձին կարևորություն է ստանում նաև սովորողների էկոլոգիական դաստիարակության և էկոլոգիական գիտակցության ձևավորման խնդիրը: Բնական միջավայրն ու կենսահամակարգերն այսօր, հայտնի բան է, շատ են տուժում մարդու ոչ այնքան ողջամիտ գործունեությունից. օդի աղտոտում, կենսաբազմազանության նվազում, գլոբալ տաքացում: Խոսում են նույնիսկ Երկրամերձ տարածքում առկա տիեզերական աղբի մասին: Բնությանը հասցրած վերքերը բումերանգի նման հարվածում են նույն մարդուն, քանզի բնությունը նրա միակ միջավայրն է, միակ տունը, որտեղ նա կարող է ապրել: Մատաղ սերնդի հոգում կենդանի ու անկենդան բնության նկատմամբ սեր և հոգատար վերաբերմունք ձևավորելը թե՛ հանրակրթական դպրոցի, թե՛ ամեն մի առանձին ուսուցչի պարտականությունն է:

Մեր հանրակրթության մեջ գնահատման նոր համակարգի ներդրումը ենթադրում է ՝գնահատում՞ հասկացության իմաստի ընդլայնում: Գնահատումն այսօր արդեն չի կարելի դիտել որպես ուսուցման պրոցեսի մի հավելված, այն համալիր կրթական գործընթաց է, որ կոչված է տեղեկություններ տալու ուսուցման որակի և նրա զարգացման դինամիկայի մասին:

Թեմայի արդիականությունը՝ Կրթական հանրության մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ ուսումնական գործունեության և արդյունքների գնահատումը սոսկ առկա գիտելիքների ստուգման ու վավերացման գործառույթ չունի: Իր այս գործառույթից զատ այն հնարավորություն ունի սովորողների մեջ ձևավորելու ուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ: Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական

ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնաիրացմանը:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել, թե արդյոք ինչպես է իրականանանում ուսուցիչների կողմից սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան:

Հետազոտության խնդիրներն են՝

1.ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,առարկայկանան չափորոշիչը .ծրագրերը.

2. անդրադառնալ ուսուցման և դաստիակարության գործընթացներին,

3. Ներկայացնել առարկայական չափորոշիչների, ծրագրերի դերը,

4. սերտորեն համագործակցել գործընկերների հետ:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը (ՖԷՀ) արդեն 24 տարի տարաբնույթ ծրագրերի միջոցով փորձում է հայ հասարակությանը ընկալելի դարձնել սոցիալ-դեմոկրատիայի հիմնական գաղափարներն ու արժեքները՝ ազատությունը, արդարությունը և համերաշխությունը[1]: Մենք խորապես հավատացած ենք, որ կենսունակ և ուժեղ ժողովրդավարության համար այս արժեքներով առաջնորդվող հասարակությունը հիմնական շարժիչ ուժն է երկրում: Իսկ ահա արժեքահեն և իրավագիտակից հասարակության ձևավորման հիմնասյուներից կարևորագույնը որակյալ կրթությունն է: ՖԷՀ ծրագրերի հիմնական գործիքներից մեկը քաղաքական ոչ ֆորմալ կրթություն տրամադրելն է: Քաղաքական կրթության մեր ծրագրերը քաղաքացիներին շահագրգռում են և հնարավորություն ընձեռում, ապահովում են տեղեկատվությամբ ու պատրաստում քաղաքական, արհմիութենական և քաղաքացիական ոլորտներում հաջողությամբ ներգրավվելու գործին: Նմանատիպ ծրագրերի շրջանակում հասարակագիտություն դասավանդող ուսուցիչները բազմիցս բարձրաձայնել են, որ ՀՀ տարրական և միջնակարգ դպրոցներում դասավանդվող առարկաների համար դպրոցական դասագրքերում առաջարկվող մեթոդները չեն խթանում աշակերտների ակտիվ մասնակցությունը, վերլուծական և քննադատական միտքը:

Մեր կրթական համակարգում երկար տարիներ գործառել է կրթության հանդեպ այսպես կոչված, գիտելիքային-տեղեկատվական մոտեցումը, երբ կրթության բովանդակությունը դիտվում է որպես գիտելիքների կարողությունների և հմտությունների ամբողջություն: Այսօրինակ մոտեցումը գիտելիքների յուրացման բավարար մակարդակ ապահովելով հանդերձ, չի ապահովում ժամանակակից մարդու համար շատ կարևոր մի շարք մտավոր և անձնային որակների ձևավորումը: Սովորողի քննադատական մտածողության, ստեղծագործական կարողությունների բացահայտման ու զարգացման, իրականության հանդեպ ակտիվ վերաբերմունքի և մարդուն անհրաժեշտ կոնկրետ կարողությունների ձևավորման խնդիրները ավանդական կրթությունը անուշադրության է մատնում:

Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել: Սա

նշանակում է, որ կրթության բովանդակության մեջ պետք է արտացոլվի տվյալ հասարակության կուտակած մշակութային արժեքները, այնպես որ սովորողները

[1] Խաչատրյան Ս. , *Ուսուցման արդյունավետ հնարներ,* Երևան,2020, էջ 10,

ձեռք բերեն ոչ թե վերացական, կյանքից կտրված ինչ-որ գիտելիքներ ու կարողություններ, այլ կարողանան ներքնայնացնել առկա մշակութային արժեքներն ու ապրել դրանցով[1]: Այսպիսով, մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները:

[1] Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, Անտարես, 2004, էջ 15

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԳԼՈՒԽ 1

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՐԳԸ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Կրթության առաջանցիկ զարգացումը ժամանակակից աշխարհում վճռորոշ նշանակություն ունի ոչ միայն հասարակության առաջընթացի, այլև յուրաքանչյուր առանձին մարդու ճակատագրի համար:

Արդի պայմաններում կրթությունը մրցունակ տնտեսության ապահովման և ազգային անվտանգության գրավական է: Կրթության համակարգը կարող է և պետք է օգտագործի իր ներուժը հասարակությունը համախմբելու, սոցիալական լարվածությունը, հակամարտությունները հաղթահարելու ուղղությամբ:

Կրթության նկատմամբ ժամանակակից պահանջների իրականացման և նրա սոցիալական դերի բարձրացման համար անհրաժեշտ է կրթական համակարգի արդիականացում, ինչպես նաև կրթության նկատմամբ պետության, հասարակության և անհատի ունեցած վերաբերմունքի փոփոխություն: «Ազգի կրթության ճիշտ կազմակերպումը պետության հզորությունն ապահովող ռազմավարություն է, կրթությանը սատար կանգնելը՝ հայրենասիրություն»: Այս կարգախոսով պետք է առաջնորդվի կրթության բնագավառի յուրաքանչյուր նվիրյալ: Կրթական համակարգը կոչված է ձևավորելու այնպիսի անհատներ, որոնք ի վիճակի կլինեն կատարելագործելու, փոփոխելու և զարգացնելու հասարակությունը:Արդի աշխարհում տեղի են ունենում գլոբալ զարգացումներ, սրընթաց փոփոխություններ. ավելի քան կարևորվում են կրթական առաջնահերթ խնդիրները, որոնք բխում են համաշխարհային կրթական զարգացումներից.

Անցյալ դարի 90-ական թվականների վերջերից ձեռնարկվում և կյանքի են կոչվում նոր ծրագրեր ու նախագծեր հայ , նոր մեթոդներ և միջոցներ կրթական համակարգի վերակառուցման և նրան նոր ազդակ հաղորդելու ուղղությամբ: Աճում է կրթության դերը, կյանքի է կոչվում կրթության շարունակականության ապահովման համար համապատասխան պայմանների ստեղծման անհրաժեշտությունը:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք

արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ,

որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել: 11 Սույն պատկերում երկու դեպքում էլ օգտագործված է տառերի նույն շարքը: Պարզապես երկրորդ դեպքում տառերի կապակցումն իմաստալից է: Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել՝ որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել: Եթե կարճաժամկետ հիշողության առանձնահատկությունը սահմանափակ լինելն է, ապա երկարաժամկետ հիշողության առանձնահատկությունն այն է, որ այնտեղ մնում է խորքային առումով լավ հասկացած գիտելիքը: Այսինքն՝ այն ամենը, ինչը մենք մակերեսային ենք հասկացել, մնայուն չէ: Ցավոք, մեր կրթական համակարգը կառուցված է այնպես, որ մենք ավելի շատ մակերեսային բաներ ենք սովորում: 12 Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը: Վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար: Հաճախ ենք լսում արտահայտություններ, որ Google-ն ամեն ինչ գիտի: Հետևաբար՝ մեր խնդիրը գիտելիք ունենալը չէ, այլ մտածողության հմտությունները զարգացնելը: Բայց այդպես չէ: Այսօր էլ հիմնային գիտելիքը ուսուցման հիմքն է: Ոչ մի բժիշկ չի կարող բարդ վիրահատություններ անել առանց հիմնային գիտելիքի: Ոչ մի պատմաբան չի կարող վերլուծություններ անել առանց անուններ և թվականներ հիշելու: Նման տեսակետ արտահայտողները գիտելիքը շփոթում են տեղեկույթի հետ: Google-ն ունի տեղեկույթ: Իսկ գիտելիքն այսօր էլ կարևոր է, քանի որ, ինչպես շատ դիպուկ նշում է ամերիկացի հոգեբան Դանիել Ուիլինգհամը, եթե չկա գիտելիք, ապա ինչի՞ մասին ենք մենք մտածում: Այլ հարց է, որ պարզապես գիտելիք ունենալը բավարար չէ: Բայց առանց գիտելիքի մտածելն էլ վտանգավոր է: Ճիշտ չէ նաև հիշողությունն ու մտածողությունը հակադրելը: Այս

մասին էլ Ուիլինգհամը ասել է. «Մենք հիշում ենք այն, ինչի մասին մտածում ենք»: Հետևաբար՝ մտածողությունն ու հիշողությունը ոչ թե հակադիր բաներ են, այլ փոխկապակցված:

Նոբելյան մրցանակակիր Ջեյմս Ուոթսոնը, որը ԴՆԹ հեղափոխության հեղինակներց է, նշում է. «Երբ ես փորձեցի վերլուծել իմ հաջողության պատճառները, հասկացա, որ դա կապված է իմ գիտելիքների հետ: Ճեղքումների համար պետք են նոր գաղափարներ, բայց դրանց հիմքը գիտելիքներն են: Իսկ գիտելիքներ ունենալու համար պետք է շատ կարդալ»:

Տեղի ունեցող փոփոխությունները նոր պահանջներ են դնում ինչպես սովորողի, այնպես էլ ուսուցչի առջև:

Այդ պահանջներին համապատասխան, ուսուցման/դասավանդման մեթոդների փոփոխություններն անխուսափելիորեն առաջադրում են բազմաթիվ պահանջներ նաև ուսուցիչների պարտականությունների նկատմամբ:

Հանրակրթության պետական կրթակարգում նշվում է, որ գիտելիքներից զատ կարևոր է նաև սովորողի կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորումը[1]: Այդ խնդիրը լուծելու համար ուսուցիչը պետք է՝

[1] Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, Անտարես, 2004, էջ 8,

1. ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ,
2. գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում մասնակցության կարևորությունը.
3. հրաժարվի ժամանակավրեպ գործելակերպից.
4. կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները.
5. մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Ուսուցիչը ստեղծագործող, արարող անձնավորություն է, որը միշտ շարժման, որոնումների, մասնագիտական զարգացման մեջ է: Նրա համար կարևոր է

անընդհատ ինքնակատարելագործման և մասնագիտական աճի անհրաժեշտության գիտակցումը:

Կրթակարգում առանձնապես ընդգծվում է ուսուցիչների վերապատաստման ուսումնական ծրագրերի անհրաժեշտությունը, որի իրականացման արդյունքում ուսուցիչը պետք է ունենա.

1) իր աշխատանքը ծրագրելու կարողություն, այդ թվում՝

ա) առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ մշակելու,

բ) ուսումնական գործընթացն արդյունավետ պլանավորելու,

գ) արդյունավետ ուսուցման համար ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու:

2) ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու կարողություն, այդ թվում՝

ա) անհատականացված ուսուցում իրականացնելու

բ)սովորողի տարիքային, հոգեբանական և կազմաբնախոսային առանձնահատկությունները,

գ) կրթության բովանդակության յուրացումն ապահովող ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ ներդրելու,

դ) ուսուցման համար բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր ստեղծելու:

3. Գնահատման կարողություն այդ թվում՝

ա) սովորողի առաջադիմության գնահատումը՝ դիտարկելով գնահատումը որպես սովորողի շարունակական զարգացումն ապահովող միջոց:

4. Անդրադարձ (ռեֆլեքսիա) կատարելու կարողություն, այդ թվում ՝

ա) ուսուցման և դաստիարակության գործընթացին մշտական անդրադարձ կատարելու, սեփական աշխատանքի արդյունքները շարունակաբար գնահատելու, սեփական պլանները վերանայելու:

5) մասնագիտական զարգացման կարողություն, այդ թվում՝

ա) ինքնուրույն և գործընկերների հետ մասնագիտական նպատակային հետազոտություններ կատարելու, ամփոփելու և եզրակացություններ ներկայացնելու,

բ) սեփական մասնագիտական զարգացումը պլանավորելու և իրականացնելու:

Ուսուցչի գործունեությունը բարդ է և աշխատատար: Ուսուցչի մասին խոսելիս սովորաբար կարևորվում է նրա դերը հասարակության մեջ

բարեփոխումներ իրականացնելու, մարդասիրական արժեքներ կրելու և դրանք սովորողներին փոխանցելու տեսանկյունից:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ է նշվում ուսուցչի անձնային, մասնագիտական որակների կարևորությունը: Հատկապես ընդգծվում են դասավանդվող առարկայի և երեխաների հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը, դասավանդման արվեստը և մանկավարժական տակտը, ուսուցչի անձնային բարոյական, կամային որակները, ինչպիսիք են զուսպ, ազնիվ, ուշադիր լինելը, բարեխղճությունը, նրբանկատությունը, երեխաների նկատմամբ ունեցած սերը և այլն:

Ըստ ժամանակակից մանկավարժական մոտեցումների՝ ուսուցչին ներկայացվող պահանջների մեջ կարող է հանդիպել այսպիսի բնորոշումների.

- որոշում կայացնող,
- ուսուցմանն աջակցող (ֆասիլիտատոր)
- ուսուցման գործընթացին հետևող,
- ուսուցման ընթացքը գնահատող,
- անձնական օրինակ ծառայող:

Ուսուցչի մասնագիտական որակները բնորոշվում են նաև այլ տեսանկյունից՝

- Արդարացի և անաչառ լինելը: Իր գործունեության ընթացքում ուսուցիչը պարբերաբար գնահատում է աշակերտներին և գնահատելիս ուսուցչի արդարացի լինելը ունի նաև դաստիարակչական նշանակություն:
- Պահանջկոտությունը, որը դրսևորվում է և՛ իր, և՛ իր աշակերտների նկատմամբ:
- Հումորի զգացումը: Իզուր չի ասվում, որ ուրախ և աշխույժ ուսուցիչն ավելի լավ է ուսուցանում, քան մռայլ ուսուցիչը: Հումորի զգացում ունեցող ուսուցիչը դասարանում ստեղծում է անմիջական, անկաշկանդ և բարյացակամ մթնոլորտ:
- Մանկավարժական տակտը: Այն աշակերտների նկատմամբ բարեկիրթ, չափավոր վերաբերմունքի դրսևորումն է, որի հիմնաքարը աշակերտի անձի նկատմամբ ունեցած հարգանքն է:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ նշվում է նաև ուսուցչին ներկայացվող մի շարք պահանջներ, ըստ որի ուսուցիչը պետք է՝

- ունենա աշխարհայացքային կողմնորոշում և հոգևոր բարձր արժեքներ.
-

- աշակերտի մեջ ձևավորի ամբողջ կյանքի ընթացքում սովորելու անհրաժեշտության

գիտակցումը.

● գիտակցի, որ ինքը դպրոցի անբաժան մասն է.

● ունենա անձնական պատասխանատվության զգացում.

● ունակ լինի մարդկանց մեջ տեսնելու անհատին.

● ունենա հաղորդակցման հմտություն.

● ցուցաբերի համագործակցային մոտեցում.

● ունենա ղեկավարման հմտություններ.

● տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին և դրանք օգտագործի դասապրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԾՐԱԳՐԵՐ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՅԴ ԾՐԱԳՐԵՐՈՎ

Մայրենի լեզվի ծրագրերում ընդգրկված նյութը համապատասխանում է տարիքային տվյալ խմբի առջև դրված նպատակներին և խնդիրներին, այսինքն՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին ամբողջությամբ: Նկատի ունենալով սովորողների տարիքային առանձնահատկությունները, նրանց հետաքրքրության շրջանակը և պահանջմունքները՝ պիտի նշել.

● տարրական դպրոց. 6-9 տարեկան աշակերտների հետաքրքրքության շրջանակը պտտվում է մեզ շրջապատող բնության, կենդանական և բուսական աշխարհների շուրջ. հետևաբար տեքստերը, ընթերցանության նյութերը հիմնականում պիտի ներկայացնեն երեխային շրջապատող կենդանական և բուսական աշխարհը.

● միջին դպրոցի առաջին աստիճան. 10-13 տարեկան աշակերտների հետաքրքրության ոլորտը ժողովրդական զրույցները, լեգենդները, առասպելները, դյուցազներգություններն են, այսինքն՝ առասպելական աշխարհն է. հետևաբար 5-6-րդ դասարաններում տեքստերը հիմնականում բանահյուսական նյութեր և դրանց հեղինակային մշակումներ են:

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ 1-6-րդ դասարաններում մայրենի լեզվի ծրագրերը ներկայացված են աղյուսակների տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը

2. Նպատակները

3. Վերջնարդյունքները

4. Բովանդակությունը

5. Առաջարկվող գործունեության ձևերը

6. Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները

7. Միջառարկայական կապերը

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

8. Կապը

Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ յուրաքանչյուր դասարանում ուսումնառելու համար առանձնացվել են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են տարիքային տվյալ խմբի հետաքրքրություններին, առանձնահատկություններին և պահանջներին: Նախ նշվում են դասարանը, տվյալ դասարանում մայրենի լեզվի ընդհանրական ժամաքանակը ուսումնական տարվա համար, ապա՝ թեմայի վերնագիրը , տվյալ թեմային տրամադրվող մոտավոր ժամաքանակը: Հաջորդող հորիզոնական սյունակներում նշվում են թեմայի ուսումնառության նպատակները, ապա ակնկալվող վերջնարդյունքները, այսինքն՝ տվյալ թեմայի ուսումնասիրության ավարտին ինչ պիտի իմանա և կարողանա աշակերտը: Հիմնական շեշտադրումը սովորողի կարողունակությունների, բանավոր և գրավոր խոսք կազմելու հմտության զարգացումն է:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, **որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:**

2. Մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները:

3. Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն:

4. Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՕԳՈՒԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Խաչատրյան Ս. , Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան,2020,

Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, Անտարես, 2004,

Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր,

Armedu համացանցային կայք։